

2015 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

2015 թվականի նոյեմբերի 5-8-ը Երևանում անցկացվել է ֆուտզալի ՀՀ առաջնությունը: Առաջնությանը մասնակցել է **63** մարզիկ, որոնք հանդես են եկել 7 թիմերով՝ ՀՀ տարբեր մարզերից և Երևան քաղաքից (ընդամենը՝ 66 մարդ):

2015 թվականի հոկտեմբերի 9-12-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում անցկացվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթը, որին մասնակցել են լսողական, տեսողական և հենաշարժողական խնդիրներ ունեցող **165** հաշմանդամություն ունեցող անձիք: Մասնակիցները մրցել են մրցույթի ծրագրում ընդգրկված շախմատ, սեղանի թենիս, դարթս, լող՝ 50 մետր, շաշկի, բասկետբոլ մարզաձևերում: Հաղթողներն ու մրցանակակիրները պարգևատրվել են ՀՀ Նախագահի հավաստագրերով և դրամական մրցանակներով, իսկ թիմային հաշվարկով 1-3-րդ տեղերը զբաղեցրած մարզերի և Երևան քաղաքի թիմերը՝ գավաթներով:

2015 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի մարզադահլիճում իրականացրել է ՀՀ Անկախության տոնին նվիրված ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում՝ «Սպորտլանդիա» մարզական խաղերը: Մարզական խաղերին մասնակցել են կրթահամալիրի 20 երեխաներ՝ 10 աղջիկ, 10 տղա:

2015 թվականի սեպտեմբերի 23-ին «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպության հետ համատեղ անցկացվել են ՀՀ անկախության տոնին նվիրված «Ուրախ մեկնարկներ» ընտանեկան մարզական խաղերը, որին մասնակցել են ընտանիքի կազմում լսողության խանգարումներով անձ ունեցող **10 ընտանիքներ՝ 30 մարդ** (հայրը, մայրը, երեխան): Միջոցառման կայացմանը աջակցել են ՅՈՒՆԻՍԵֆ-ի հայաստանյան գրասենյակը և Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիան:

2015 թվականի օգոստոսի 19-ից 23-ը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ՀՀ պետական բյուջեից հատկացված լրացուցիչ գումարով ապահովվել է «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպության մարզիկ Գարիկ Փիլոսյանի մասնակցությունը Իտալիայի Միլան քաղաքում անցկացվող պարականոնի աշխարհի առաջնությանը: Առաջնությանը Հայաստանը ներկայացնող Գարիկ Փիլոսյանը գրավել է 14-րդ տեղը:

2015 թվականի հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 3-ը «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպության 5 մարզիկ մասնակցել է ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում անցկացվող 2015 թվականի հատուկ օլիմպիադաների աշխարհի ամառային խաղերին: Լողի ազատ ոճում հանդես եկող **Տիգրան Գևորգյանը** գրավել է առաջին տեղը՝ նվաճելով ոսկե մեդալ:

2015 թվականի հուլիսի 14-29-ը Երևանում անցկացվել է կույր շախմատիստների տղամարդկանց անհատական եզրափակիչ առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և Երևան քաղաքը ներկայացնող առաջին և երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող **16 կույր շախմատիստներ**, ընդամենը՝ 27 մարդ (11 ուղեկցորդ):

2015 թվականի հունիսի 9-11-ը Երևանում անցկացվել է հաշմանդամների հանրապետական մարզական 13-րդ փառատոնը, որին մասնակցել են **120** մարզիկ՝ Երևան, Էջմիածին, Աբովյան, Արարատ, Արմավիր, Սպիտակ, Վանաձոր, Գյումրի, Տաշիր, Կապան քաղաքներից: Հաշմանդամ մարզիկները իրենց ուժերը չափել են 7 մարզաձևերում՝ սեղանի թենիս, անվասայլակներով բասկետբոլ, լող, բազկամարտ, ծանրամարտ, շախմատ և շոու դաուն: **Հունիսի 10-ին** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտեն հաշմանդամների հանրապետական մարզական փառատոնի շրջանակներում անցկացրել են հաշմանդամային սպորտի հիմնահարցերին նվիրված սեմինար-խորհրդակցություն:

2015 թվականի մայիսի 14-17-ը Երևանում անցկացվել է խուլերի շախմատի Հայաստանի Հանրապետության 10-րդ առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի **34** խուլ շախմատիստներ (ընդամենը՝ 38 մարդ):

2015 թվականի մայիսի 4-6-ը Երևանում «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությունը անցկացրել է «Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ» ծրագրով ֆուտբոլի հանրապետական առաջնությունը, որին մասնակցել են ՀՀ տարբեր մարզերի և Երևան քաղաքի 5 հատուկ դպրոցների աշակերտներ: Յուրաքանչյուր թիմ ներկայացրել է 12-15 տարեկան 8 մարզիկի: Մրցումներին մասնակցել է **60** մարդ:

2015 թվականի մայիսի 3-5-ը և 8-10-ը Երևանում անցկացվել են Հայաստանի Հանրապետության հունա-հռոմեական և ազատ ոճի ըմբշամարտի առաջնությունները, որտեղ հունա-հռոմեական ըմբշամարտին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի **42** (ընդամենը՝ 46 մարդ) և ազատ ոճի ըմբշամարտում՝ **42** խուլ մարզիկներ (ընդամենը՝ 46 մարդ):